Ի. ՏԱՐԻ 1882 — ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 18 ԱՀԵԿԱՆ 4382 — Հ. Տ. 25 ԱՊՐԻԼ 1890 — Ն. Տ. 7 ՄԱՅԻՍ 1890 — ՀԻՋՐ. 18 ՌԱՄԱ ԱՆ 1307 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՍԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ Գալաթիա, Նորատունկեան-խան

درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده آره‌وك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար նոյնպէս օրական տարեքաղ	160
» » »	80
» » »	40
Գաւառ » »	200
» » »	100
Օտար երկրներ »	56
» » »	28

Դուրս գրուածներու համար դրամը նամակաբաշխութեան վրայ է։ Խմբագրութիւնս գրելու համար դրամի կամ գրութիւնս ետ լաքելիք։

Les annonces sont reçues AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 24 ԱՊՐԻԼ, 1890

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՍԵՐՊ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ Ի ՀՈՒՆԴԱՐԻԱ

ՄԱՃԱՌԱԿԱՆ ՊԱԼԱԺԵՆԻԱՆ

Գիտեն մեր ընթերցողք թէ Մաճառստանի օրթոտոքս Սերպք հոգեւոր գլուխ մ'ունին «Սերպ Պատրիարք» տիտղոսով, որոյ բնակավայրն է Ի Քարլովիցի, Թայլ գետին վրայ Հունգարական քաղաքին մէջ։ Այս Պատրիարքութիւն հոն հաստատուած է 1699 ին, երբ Թուրքիոյ և Աւստրիոյ միջեւ կնքուեցաւ Քարլովիցի համբաւաւոր Դաշնագիրն, որ ժամանակին Պերլինի Դաշնագիրն էր։ Անկէ ի վեր, մէկ ու կէս դար, մինչեւ 1860, սերպ օրթոտոքս հասարակութիւնը վարչական ինքնօրինութիւն վայելած էր, որով ազատապէս կ'ընտրէր իւր Պատրիարքը։ Բայց 1861 էն ի վեր, մաճառ կառավարութիւնը կանոն դրաւ Պատրիարքական ընտրութեան առթիւ արքայական Բռմիսէր մը ղրկել, որ կը նախագահէ Ընտրողական Ժողովոյն, ըստ կարելւոյն ազդեցութեան կը բանեցնէ, և աւելի կամ նուազ մեղմ բռնութիւն մ'ի կիր առնելով, կը համոզէ ժողովը մաճառ կառավարութեան հաճոյ ընտրելի մը Պատրիարք ընտրելու։ սերպ հասարակութեան։ Կառավարութիւնը կը բեկնէ ընտրութիւնն, եթէ իւր ակնկալութեան չհամապատասխանէ։

Արդ, Հունգարիոյ Սերպք, եօթն թեմերու բաժանեալ, աւելի քան մէկ միլիոն հոգի կը հաշուին, և հետեւապէս արհամարհելի քանակութիւն մը չեն։ Մաճառ կառավարութեան դէմ Սերպք բազմաթիւ գանգատներ ունին, գոնս քանիցս յայտնած են հանրագրերով, որք նախընթաց համագային ժողովներուն ձեռամբ մատուցուած են Ֆրանց Եոզէֆ Կայսեր, իբրեւ Թագաւոր Հունգարիոյ։

Հանգուցեալ Պատրիարքին նախորդն, Ամեն. Անկելից Պատրիարք, փորձեց հաշտութիւն զոյացնել Պետութեան և իւր հօտին միջեւ, բայց չյաջողեցաւ, կորոյս իւր ժողովրդականութիւն, և կանխահաս մահուամբ մը վախճանեցաւ, ոմանք ըսին՝ բռնամահ եղաւ։ Իրեն յաջորդեց Ամեն. Արսենիոս Սերնովիչ, անկարող մարդ մը, որ մօտերս վախճանեցաւ։

Անցեալ տարւոյ Ընտրողական ժողովոյն մէջ, ընդդիմադիր կուսակցութիւնն, որ ժողովրդեան մեծամասնութիւնը կը ներկայացնէ, երկիցս քուէ տուաւ Դեր. Սիմէոնովիչ եպիսկոպոսին, զոր երկիցս մերժեց մաճառ կառավարութիւնը, կամ լաւ ևս՝ Կայսր-Թագաւորն։ Այս բան տեղի կ'ունենար ազատական Հունգարիոյ ազատամիտ նախարարապետին Պ. Թիսայի օրով, խորհրդարանական դրութեամբ կառավարեալ երկրի մը մէջ։ Վերջին Պատրիարքին մահէն ի վեր, տեղեկատ-լութիւնը կը վարէր Դեր. Վասիլիան Փեթրովիչ, հմուտ և նշանաւոր եկեղեցական, փորձ ազգասէր, և ճշգիւ այս պատճառաւ կասկածելի յաչս կառավարութեան։

Կառավարութիւնն իւր ուզած մարդը գտած էր յանձին Դեր. Կէորկիյ Պրանքովիչի, եպիսկոպոս Թիմիշվարի, ծնեալ Զենթա, ուսեալ ի Սէկէֆին (ի Հունգարիա երկուքն ալ.) և իւր լաւ բնաւորութեամբ հանրածանօթ։ Եւ այնչափ հանրածանօթ որ Պ. Թիսայի պաշտօնակից Պ. Օկիւսթ Թրէֆոռ, գաւառական նախարարն Հունգարիոյ, իւր բովանդակ ազդեցութիւնը գործածած էր Թիմշվարի եպիսկոպոս ընտրել տալու համար զնա, և յաջողած։ Այս տարի, կոմս Ալպին Զաքի, գաւառական և կրօնական նախարարն, արքայական Բռմիսէրը ղրկելով, ըսեր է անոր. «Մեզ Պրանքովիչ պէտք է իրեւ Պատրիարք։ գացէ՛ք և ըստ այնմ շարժեցէք»։

Ընդդիմադիր ազգային ընտրողները համար այս տարի Նշանակեալ Բռմիսէրն էր Պառոն Ֆէտոր Նիկոլիչ, (ազգակա՞ն Պառոն Նիկոլայիի,) որ իւր պաշտօնը կ'երեւի թէ կատարեց ի կատարեալ գոհունակութիւն կառավարութեան։ Ապրիլ 12/24ին նախագահեց Քարլովիցի Ընտրողական Ժողովոյ առաջին գումարման, «Խաղաղութեան սրահ» կոչուած հռչակաւոր դահլիճին մէջ։ Ժողովոյն ներկայ էին 72 անդամք,— թեմական եպիսկոպոսք, վարդապետք և աշխարհական պատուիրակներ թեմերէն։

Պառոն Նիկոլիչ հաւիրճ այլ յոյժ ճարտար բանախօսութեամբ մը, յիշեցուց Ֆրանց Եոզէֆ Կայսեր բարեացակամութիւնն, որով թոյլտուութիւն շնորհած էր այս Ընտրողական ժողովոյ գումարման։ Հրաւիրեց ժողովականներն իրենց գործն ուսումնասիրել առանց երեք նիստի մէջ, և ի վերջոյ հնչուն ձայնիւ կեցցէ ազազակեց ի պատիւ «Ն. Կայսերական և արքայական առաքելական Վեհափառութեան, Կայսեր Աւստրիոյ, առաքելական Թագաւորին Հունգարիոյ, Խրուաթիոյ, Դալմատիոյ և Սկլաւոնիոյ»։ Ժողովականաց շատեր յետեւայ Զէլէ՛ներով (կեցցէ՛) պատասխանեցին։

Դեր. Սիմէոնովիչ, իբրեւ տարիքով երիցագոյն անդամ եպիսկոպոսական դասուն, նախագահ նշանակեցաւ ժողովոյ, յորում բազմաթիւ կուսակիցներ ունէր։ Բայց Պառոն Նիկոլիչ յաջողեցաւ այն երեք աւուրց մէջ ընտրողներն ըստ կամն հաճեցնել, այնպէս որ, ինչպէս Հեռագիրը ծանոյց արդէն, կառավարական ընտրելի Դեր. Կէորկիյ Պրանքովիչ Պատրիարք ընտրեցաւ։ Մաճառ լրագիրք վստահ են թէ նոր Պատրիարքն «իւր խոստումները պիտի պահէ», այսինքն մաճառ Պետութեան շահերուն հոգածու պիտի դտնուի։ Բայց թէ Հունգարիոյ սերպ ազգաբնակութիւնը գոհ պիտի մնայ, այս ալ բոլորովին տարբեր խնդիր է։

Կը կարծէ՞ք թէ այս պատմութիւն շահեկանութիւն կամ այժմէականութիւն (actualité) ունենայ Հայոց համար։

ԴՈՂԱՔԱՐՔ Ժիրլ. ՍԻՄՈՆԻ

Պ. Ժիւլ Սիմոն կը շարունակէ գրել Թուրքի մէջ։ Մանկանց և կանանց պայտպանութիւն, գործաւորական խնդիր, ընտանեկան կեանք և իւր վայելք, հանրային պարտաճանաչութիւն, ընկերային վերանորոգութիւնք իւր նախասիրական նիւթերն են։ Իւր հրաւէրք լսելի կը լլնին։ Իւր յոդուածոց իբրեւ համակրելոյ պատասխան իրեն ուղղեալ շատ մը նամակներու համառօտութիւնը կ'ընէ սիրուն յօդուածով մը, զոր սա մանրամասով կը սկսի։

«Անցեալ դարուն վերջերն ի Ֆրանսա եպիսկոպոս մը կար, որ հարկադրեցաւ իւր թեմէն փախչի՝ ազատելու համար պահանջատեարց ձեռքէն։ Ի Փարիզ ապաստանած, հոն ևս քիչ ժամանակն պարտուց ներքեւ ընկճեցաւ, և ի վերջոյ՝ ճարահատեալ՝ գնաց թագաւորին ոտքն ինկաւ, ազաչելով որ իւր պարտքերը վճարէ։ Թագաւորն, իբրեւ միակ պատասխան, յորդորեց փախստական եպիսկոպոսն իւր թեմը վերադառնալու։ Գնաց, և իւր առաջնորդարանին մէջ զամբիւղ մը գտաւ նամակներով լի, և կրակ վառել տուաւ ամենը մէկէն այրելու համար։ Բայց նամակաց դէզին մէջ հատ մը իւր ուշադրութիւնը գրաւեց։ Բացաւ։ տեսաւ որ 3,000 ֆր.ի փոխանակագիր մը կը պարունակէր։ Այս բարեպատեհ դիպուածէն քաջալերեալ, առաջին անգամ լինելով աչքէ անցուց իրեն ուղղեալ նամակներն, և անոնց մէջ բաւական նուէրներ գտաւ՝ իւր բովանդակ պարտքն երեսփոխիկ վճարելու չափ։»

«Այսպիսի դէպք մը քիչ մնաց որ ինձ ևս պատահէր այս առաւօտ, ինչ ինչ տարբերութեամբք։ Նախ որ ես պարտք չունիմ, և յետոյ, իմ անձիս համար գրամ չեն ղրկեր ինձ։ Բաւ գրամ կը ղրկեն ինձ Մանկապաշտպանութեան Նպատակաւ, փոդոցներէն հաւաքուած և պաշտպանութեան ներքև առնուած տղոց համար, զորս կ'որդեգրէ Փէյէ Մէյ-ընէն անուն ընկերութիւնը։ Սոյն սքանչելի ընկերութեան վրայ Թուրքի մէջ յոդուածներ հրատարակելէս ի վեր, հարիւրէ աւելի նամակներ ստացայ, յորոց ոմանք 100 կամ 50 ֆրանքնոց պանքոռոն կը պարունակէին, ոմանք ալ 12 ֆր., որ յիշեալ ընկերութեան տարեկան բաժնեգինն է։ Դրամական այս նոր ոյժերով կարող կը լլնինք բազմաթիւ տղաքներ ազատել մոլութենէ, թշուառութենէ, նոյն իսկ մահէ։ Բոլոր այս դրամները կը ղրկեմ մեր գանձապետին, Պ. Կուլշո, ի թիւ 102, Ռիշլիէօ փողոց։ Այս հացէն միաքերնիդ պահեցէք։ Դանձապետն ևս ընդունած է ուղղակէս իրեն ղրկուած նուէրներ և բաժնեգներ։ Նմանապէս մեր ընդհանուր քարտուղար Պ. Ռոլլէ։ Այս առաւօտ իսկ անանուն տիկին մը 100 ֆր. ղրկեր է իրեն, խնդրելով որ նշանակուի Թուրքի մէջ։ Իւր խօսքը չկատարելու համար կը նշանակեմ, բայց չեմ կրնար Թուրքն խնդրել որ նուիրատուաց ցուցակներն ամբողջովին հրատարակէ։ Նախ սա պատճառաւ որ ցուցակներն օր ըստ օրէ պիտի աւելնան, և Թուրքի՝ որչափ ևս մեծ լրագիր՝ դժուարաւ կրնայ տեղ գտնել ցուցակաց, և յետոյ, պէտք է մոռնալ Թուրքի ընթերցողները, զորս անչուշտ պիտի ձանձրացնէ անուանց այս երկար բարակ շարք (*)։ Մեր Փէյէ Մէյ-ընէն անուն ընկերութեան տեղեկագիրը պիտի հրատարակենք պարբերաբար, և նուիրատուաց անուանք անոր մէջ պիտի երեւին։

«Այդ տեղեկագրոյ մէջ մերթ ընդ ընդ մերթ որատաուչ մանրամասնութիւններ ալ պիտի տեսնէք։ Կը յիշէ՛ք այն պզտիկ դոյն զոր որդեգրեցինք, կրթեցինք, և որ ի վերջոյ պարկեշտ և աշխատասէր պատանի մը եղաւ։ «Օթէլոյի անծանօթ բարեկամ մը» 100 ֆր. ղրկած է ինձ, երկու մասի բաժանեալ. 12 ֆրանքն իւր տարեկան բաժնեգինն է իրեւ անդամ Փէյէ Մէյ-ընէն ընկերութեան, և 88 ֆրանքն ալ յիշեալ դարձի եկած ազուն համար գրամագլուխ մը կազմելու պիտի ծառայէ։ Ցանկալի տղոյ մը նուէր մը կը ղրկէ ինձ, «Խեղճ եղբայրց համար» արձանագրութեամբ։ Նին մը. «Ցանուն կորուսած գուկիս»։ Գործաւոր մ'ալ կը ղրկէ «տասն երկու ֆր., իբրեւ հաւաքական բաժնեգին հինգ գործաւորաց որք նոյն գործարանի մէջ կ'աշխատին»։

«Ո՛հ, սիրելի՛ հոգիք, ո՞րչափ կը փափաքիմ ճանչել զձեզ, թղթակցիլ ձեզ հետ, և ըսել թէ ո՞րչափ մեծ երջանկութիւն կը զգամ ձեր բարեգործութեան իրեւ միջնորդ ծառայելու համար։ Բայց պէտք չէ որ ուշադրութիւն դարձնեմ իմ գլխաւոր գործս, որ է սիրտ և զգացում ունեցող անձանց ցոյց տալ թէ տակաւին ո՞րչափ թշուառութիւնք կան սփոփելու։ Երկու հոսանքներ կան որք կը շրջապատեն և դրեթէ կ'ողողեն զմեզ, մին ահռելի, միւսն օրհնեալ հոսանք։ Թշուառութեան հոսանքն որ կը բարձրանայ կը սաստկանայ հանապազ, և Բարեգործութեան հոսանքն որ կ'առատանայ։»

ԳՈՐԾԱՒՈՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ ԵՒ ԳՈՐԾԱՒՈՐԱՑ ՑՈՑՑԵՐՆ ԾԵՒՐՊԱ

Ընկերվարականք կ'ուզեն մարդկային ընկերութեան զանազան դասուց պայմաններն հաւասարեցնել ըստ կարողութեան գաղափարը, Քուրաժոյի տան մէջ։ Լա Հէյոն որ եկած էր անոր խօսքն ընել իրեն։ եթէ պառաւը չըլլար, ինք բան մը գիտցած չպիտի ըլլար, այդպիսի ոճիր մը վիտքէն չպիտի անցուներ։ Եւ Վիրժինի Լաթուշն ողջ եղած պիտի ըլլար տակաւին։

Ինչո՞ւ պառաւն իրեն դիմած էր և ո՛չ ուրիշի մը, շրջակայից գաղտագրեալ միոյն, թափառաշրջիկի մը, մուրացկանի մը։ Այնքա՛ն մուրացիկներ կան Սէյնի մէջ։

Ռիժիշը մտմտաց։

—Մտածե՛լ թէ իր պատճառաւը եղայ ինչ որ եմ։ Թէ ինքզինքիս սոսկում կը պատճառեմ ինչպէս սոսկում կը պատճառեմ զիս ճանչցողներուն։ Եւ թէ այսօր խոյս կուտամ մարդոցմէ, վասն զի կը վախնամ անոնցմէ։

Աչացը մէջ բոց մը փայլեցաւ։

—Ինքն ալ ինձի չափ մեղապարտ է։ Բայց որովհետեւ ինքը գրեթէ անգիտակից է, նուազ կը տառապի։ Միթէ արդարութիւն է այս։

Բայլ մը առաւ դէպ ի պառաւը որ կը քնանար։

Լա Հէյոն չէր արթննար։

Ռընօտիէռ ոտքը վեր առաւ, պառաւին գլխուն վրայ, ինչպէս կ'ընեն սղոցն մը ճզմելու համար։

Բայց ինքզինքը զսպեց։

—Ես իրմէ աւելի յանցաւոր եմ։

Լա Հէյոն չարժուիր մը ըրաւ ու աչքերը բացաւ։

Իսկոյն ճանչցաւ Ռընօտիէռն ու ոտքի ելաւ։

Երկիւղ մը կար նայուածքին մէջ զոր ուղղեց անոր վրայ, հիւանդ անասնոյ մը իւր տիրոջ վրայ ուղղած ակնարկին նման։

—Դո՞ն ես։

—Քիչ մը հանդարտեցա՞ր։

—Ի՞նչ կ'ուզես ինձմէ։

—Կրնա՞ս պատասխանել իմ հարցմանցս։

—Ինծի ի՞նչ հարցունելիք ունիս։

—Պ. Նօէլ տը Վիլլատօնին խոստովանո՞ր ես։

—Այո՛։

—Իր ազախինը լսեր է խոստովանութիւնդ։

—Ա՛հ, գոչեց ջաղացպանուհին, խեղդուկ հառաչանքով մը... բայց ես ամէն բան ըսի երէցին, ամե՛ն բան, կը հասկնա՞ս։

—Ազախինը եկաւ գտաւ զիս։

—Ի՞նչ ըսաւ։

—Կը պահանջէ որ ամուսինդ փրկենք իրեն սպառնացող դատապարտութենէն։

—Այդ բանին համար ի՞նչ ընելու է։

—Ինքզինքիս մատնելու ենք։

—Բայլ մը առաւ դէպ ի պառաւը որ կը քնանար։

—Ճշմարիտ է, և խօսքը մէջերնիս, արդարութիւն կ'ըլլայ։

—Բայց ես չեմ ուզեր, չեմ ուզեր։

—Ինչպէ՞ս պիտի ազատիս մեզ սպառնացող վտանգէն։

—Չեմ գիտեր։ Դու մտածէ, Վիրժինի Լաթուշն ապաննողը դու էիր։ Դու պէտք է որ ազատես զիս, եթէ կուզես որ ես զքեզ ազատեմ։ Իմ միաքս չէր անցած թէ կրնայինք այնպիսի սպանութիւն մը գործել։

—Մենք այլ ևս կորսուած ենք։

—Կորսուա՞ծ։

—Այո՛։ Հիմայ, տես ի՞նչ պիտի ընես։

Լա Հէյոն Ռընօտիէռի երեսը նայեցաւ սոսկմամբ։ Զայնը քաղցր և խիստ էր մանգամայն։ Բժշկին այդ կերպ խօսիլը լսած չէր երբէք։ Աչքերը քօղարկուած էին, այնպէս ինչպէս երբ մէկն ինքն իր վրայ կը մտածէ, երազայնոր, առանց արտաքին առարկայներու վրայ ուշադրութիւն դարձնելու։

—Ա՛յլ թոյլ տալու չես որ ամուսնոյդ վրայ ծանրանայ Վիրժինի Լաթուշն սպանած ըլլալու ամբաստանութիւնը։

—Իրիկս չպիտի դատապարտուի։ Ինծի ըսին թէ Պ. Անտրէ Վիլլատօն պիտի պաշտպանէ զայն։

—Պ. Վիլլատօն շատ ճարտար է, քանի որ յաջողեցաւ իմ ոձիքս ազատել։ Սակայն ամուսնոյդ դէմ հանուած ամբաստանութիւնք ինձ դէմ հանուածներէն շատ աւելի ծանրակշիռ են... փոքրիկ Ժաքլին վկայութիւնէն ալ աւելի ծանրակշիռ։ Միաքդ մի՛ դներ որ անպարտ պիտի արձակուի։

—Ուրեմն խեղճ մարդը կորսուած է։ Ի՞նչ ընելու է զինքը ազատելու համար։

—Կ'երթամ դատաւորները կը գտնեմ։

—Ե՞ս։

—Եւ անցած դարձածը կը պատմեմ անոնց։

—Ե՞ս... ե՞ս, գոչեց Լա Հէյոն սոսկման ծայրագոյն ստիճանին հասած։

Եւ յետոյ ընկրկելով Ռընօտիէռի առջեւ, անոր երեսը կը նայէր, իբրեւ թէ ոտքերն յանկարծ խենդեցած ըլլար։

—Բան մը չպիտի ծածկես անոնցմէ, կը լսե՞ս։ Ոնիրը պիտի պատմես այնպէս ինչպէս գործեցիք զայն, ի՞նչ պարագաներու մէջ որ գործեցիք։

—Ցեռա՞ղ։

—Այնեն այս է։

—Բայց ես ի՞նչ պիտի ըլլամ։

—Զքեզ պիտի ձերբակալեն, պիտի դատապարտեն։

—Գուցէ գլուխս կտրեն։

—Ա՛յ, բայց մշանջենական կերպով պիտի բանտարկուիս։

—Եւ լրջորէ՛ն խորհուրդ կուտաս ինձ այս բանն ընել։

—Շատ լրջորէն։

Սուր ծիծաղ մը արձակեց պառաւը։

—Խենդ է, ըսաւ քիթին տակէն, խենդ ըլլալու է։

—Մի՛ մոռնար որ ժէնդարմն ամէն բանի տեղեակ է և զմեզ կորստեան մատնել կ'ուզէ։

Լա Հէյոն ծիծաղը կտրեց։

—Ի՞նչ ընելու է։

—Ո՛չ մէկ բան կրնայ ազատել զմեզ։

—Բայց, մինչդեռ ես ինքզինքս երթամ դատաւորներուն մատնեմ, դու ի՞նչ պիտի ըլլաս։ Կը կարծես թէ ամբողջ ոճիրն իմ վրայս պիտի առնուի, առանց մեծագոյն բաժինը ձեզ թողլու։ Եւ թէ ինքզինքս քու տեղդ դատապարտե՞լ պիտի տամ, ջանալով փրկել զքեզ։

—Ո՛չ։ Այդ բանը չեմ ուզեր։ Ըսի քեզ արդէն որ բան մը չի ծածկես քու յայտնելիս։ Բայց անհաւատարութիւնը բնութեան իսկ օրէնքն է։ Մարիս Ին այս ճշմարտութեան ապացոյցն ընծայեց նոյն իսկ արեւն, որ նոյն օր փայլեցաւ ի Փարիզ և ի Վիեննա, յայտնելով գործաւորաց թափորները, մինչ Եւրոպոյ հարաւակողմն, ի Հռոմ և ի Մատրիտ, ջրհեղեղանման անձրեւ տեղաց, և թրջած գործաւորք չկրցան վայելել իրենց տօնն և համբաւեալ ցոյցը կազմակերպել փողոցներու և հրապարակներու մէջ։

—Պերլինի մէջ 3-400 հազար գործաւորք կան ամեն կարգէ և տեսակէ, և առնց 100ին 5-10ը միայն դաղաստանին մասիս Ին։ Մնացեալ առաւ մեծամասնութիւնն բան սոսկալանին այնատեղաց, որովհետեւ կառավարութիւնն որ չատ մը գործարաններ կը բանեցնէ և մասնաւոր գործատերաց մեծագոյն մասը չուզեցին արձակուրդ տալ գործաւորաց։ Գործատերաց այս յաջողութիւնը բարեկարգութեան դատին համար իրրեւ յաղթանակ մը կը նշանակեն կառավարական լրագիրք։ Օգը գեղեցիկ էր Պերլինի մէջ, և գործաւորք ամեն փորձութիւն ունէին նոյն օրը գործ ընելու, բայց ակնոյ չկամեցին ընկերվարական յորդորանքներուն, և իրենց գործին սրբապէսն հանդարտօրէն։ Մարիս 1 ի տօներ բռնող Պերլինցի գործաւորաց մեծագոյն մասն յաւարտ իրենց խաղաղ թափորին գացին Ֆրիտրիխսհայնի դերեզմանատունն, ուր կը ննջեն 1848 մարտի չփոթութեան զոհերն, որք ի Պերլին ծանր չարժում մը յարուցած էին ի գոհացում իրենց քաղաքական և ընկերվարական պահանջմանց։

* *

Ի Վիեննա, բովանդակ պահպանն զորքն ի զէն կոչուած էին, բայց փողոցներու մէջ չէին շրջեր, այլ պատրաստ կը սպասէին որոշեալ կէտերու վրայ։ Փրաթերի հոյակապ զբօսավայրին մէջ, որ Եւրոպոյ ամենէն աւելի հռչակաւոր զբօսավայրն մին է, հետեւակ զորքեր դասուած էին կայսերական տաղաւարին մէջ։ Մի՛ն հեծելազորքը կը շրջէր զբօսավայրի անցքերուն մէջ, ուր մարդագետինն և ծաղիկները շրջապատող մետաղեայ թելէ պատուարք բարձրացած էին՝ ի հարկին հեծելազօրաց գործադրութեան դիւրութիւն տալու համար։ Կ'ըսուի թէ նոյն օր իրր 30,000 անձինք կային Փրաթերի մէջ, և ուրիշ տարիներու բազդատմամբ, 50 առ 100 աւելի էր գարեջրոյ սպառումը։ Գործաւորաց մեծագոյն դումարումը տեղի ունեցաւ իրենց կեդրոնական մասնախմբին բնակավայրը, Սեւ Արջի Գարեջրատան մէջ, «ուր, կ'ըսէ Թ-ՅԷի թղթակիցը, դասյոյժ բարեկարգ դումարում մը արանց և կանայց, որք դարեջուր խմելով եւ խոզանուոյ ապուխտ ուտելով երաժշտութիւն մտիկ կ'ընէին։ Բոլոր գործաւորապետք որոց հետ տեսակցեցայ՝ յոյժ խաղաղասէր խօսքեր կ'ընէին, և արհամարհանօք կը մերժէին կառավարող դասուց վնասներուութիւնքն գործաւորաց վերագրուած ազետալի խորհուրդներն։ Այս բարի մարդիկ, լսելով թէ իրենց հետ խօսողն Անգլիացի մ'է, խնդութեան աղաղակ մը արձակեցին, և խնդրեցին որ Լոնդոնի լրագրաց միջոցաւ իրենց բարեկամական ողջոյնն հաղորդուի Մեծին Բրիտանիոյ իրենց գործաւոր ընկերակցաց։»

—Ի Փէշթա, գեղեցիկ օդ մը յաջողցուց գործաւորական թափորն, որ միջօրէին մէկ ժամ ետքն սկսաւ գիմել կեդրոնական մեծ զբօսավայրն, ուր իւրաքանչիւր խմբակ իրեն յատկացեալ վայրը կը գրաւէր, առաջնորդութեամբ գործաւոր քոմիթէներու, որք բարեկարգութեան կը հսկէին։ Վիեննայի հասարակութիւնն զմայլանօք դիտած էր այս գործաւոր քոմիթէներու փութաջանութիւնը, թուով իրր 1,600, որք իրենց թեւերուն վրայ «Բարեկարգութիւն, բառը նշանակած, թափորին բոլոր երկայնութեամբ կը հսկէին, թոյլ չտալով որ գործաւորք դրդռիչ խօսքեր ըսեն, կամ կարգ ու կանոն խանգարեն ա՛ և իցէ կերպիւ։ Այս կարգադրութիւնը ճշդիւ ի գործ դրին նաեւ Փէշթայի աւելի կրակոտ գործաւորք, որք, թուով իրր 50,000, գրաւեցին զբօսավայրին բոլոր արամագրելի տեղերը։ Փիչ եռքն հասան 100ի չափ գործաւորուհիք իրենց գիւղացւոյ ազգային զգեստով, և՝ ուրախութեան և քաջալերութեան ջերմագին աղազակներով ողջունեցան իրենց 50,000 եղբարց կողմէ։ Մեծ բեմ մը կառուցուած էր, սա խոշոր արձանագրութեամբ, «Մ-ԷՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ Ո-ՐԵ ԺԱՄԱՆԱԿ Ո-ՐԵ ԺԱՄԱՆԱԿ»։ Այս գործաւորաց քաջառողջ երեւոյթէն գաւակով, որք արդէն ամենքն ալ մաքուր զգեստ հագած էին, ընկերային թշուառութեան ներկայացուցիչներ չէին կրնար համարուիլ։ Ամենաբանք ծաղրեցին կառավարող դասուց արտայայտած երկիւղներն, և միջազգային դաշնակցութեան առաւելութիւնները բացատրեցին։ Ի վերջոյ, Ֆրանսական Մարսէյէզին հունգարերէնն երգուեցաւ, և Փարիզի միջազգային գործաւորական համաժողովոյն յանձնարարած որոշմունք միաձայն քուէարկեցան, դանոնք Հունգարիոյ Թարգմանին վերացման մատուցանելու տրամադրութեամբ։

* *

Ի Մատրիտ, ընդդիմադիր երեսփոխան Պ. Բուարգէրօ Երեսփ. ժողովոյն մատոյց առաջարկ մը որով կը խնդրէ. Ա. Աշխատութեան օրինական աւուրոյ թիւն օրական ութ ժամ աւելի չլինի։ Բ. Իւրաքանչիւր թագաւորութեան մէջ գործաւորաց պաշտպան յանձնաժողով մը կազմուի։ Գ. Գործ վնասելու գացող գործաւորք երկաթուղիով ձրիապէս փոխադրուին։ Դ. Պայծառական Օրամթերքին ամեն օր հրատարակէ ամեն նահանգի մէջ գործաւորաց աւուրչէքին տակագինը։

—Զիրակս Միացեալ Նահանգաց ամենէն աւելի ճարտարագործ կեդրոններէն մին է։ Հոն տեղի պիտի ունենայ 1893ի Ամերիկեան մեծ Արուեստահանդէսը։ Մարիս Ին տօնին առթիւ, 15,000 գործաւորք թափոր

ԹԷՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻԼ ՄԱՌԻ

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԴՐԱԽՏ

ՄԱՍՆ ՁՈՒՐՈՒՐԴ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Ռընօտիէռ ցանկութեամբ ու կատաղաբար սիրած էր այդ կինը։

Եւ անոր անհաւատարմութիւնը տեսնելով, ուզած էր վրէժ լուծել։

Ակից յանաչ եկած էր իր վատ ոճիրը Ֆէրնանտի վրայ։

Այո՛, այդ պառաւին պատճառաւ որ այնտեղ կ'ծկտուած կը մնար, իր ոտից տակ, ցնցոտիներ հագած, հագուստները պատառուն ու ցեխով ծածկուած, անոր պատճառաւ էր որ ամօթ և յուսահատութիւն պատած էին Վիլլատօններու ազնուական ընտանիքը։

Անոր պատճառաւ էր որ ինք՝ Ռընօտիէռ՝ որ մինչեւ այն ատեն անբասիր վարմունք մը ունեցած էր, ոճրագործ դարձած էր։

Եւ յետո՞յ...

Լա Հէյոնը չէ՞ր որ յղացած էր այս գողութեան գաղափարը, Քուրաժոյի տան մէջ։ Լա Հէյոն որ եկած էր անոր խօսքն ընել իրեն։ եթէ պառաւը չըլլար, ինք բան մը գիտցած չպիտի ըլլար, այդպիսի ոճիր մը վիտքէն չպիտի անցուներ։ Եւ Վիրժինի Լաթուշն ողջ եղած պիտի ըլլար տակաւին։

Ինչո՞ւ պառաւն իրեն դիմած էր և ո՛չ ուրիշի մը, շրջակայից գաղտագրեալ միոյն, թափառաշրջիկի մը, մուրացկանի մը։ Այնքա՛ն մուրացիկներ կան Սէյնի մէջ։

Ռիժիշը մտմտաց։

—Մտածե՛լ թէ իր պատճառաւը եղայ ինչ որ եմ։ Թէ ինքզինքիս սոսկում կը պատճառեմ ինչպէս սոսկում կը պատճառեմ զիս ճանչցողներուն։ Եւ թէ այսօր խոյս կուտամ մարդոցմէ, վասն զի կը վախնամ անոնցմէ։

Աչացը մէջ բոց մը փայլեցաւ։

—Ինքն ալ ինձի չափ մեղապարտ է։ Բայց որովհետեւ ինքը գրեթէ անգիտակից է, նուազ կը տառապի։ Միթէ արդարութիւն է այս։

Բայլ մը առաւ դէպ ի պառաւը որ կը քնանար։

Լա Հէյոն չէր արթննար։

Ռընօտիէռ ոտքը վեր առաւ, պառաւին գլխուն վրայ, ինչպէս կ'ընեն սղոցն մը ճզմելու համար։

Բայց ինքզինքը զսպեց։

—Ես իրմէ աւելի յանցաւոր եմ։

Լա Հէյոն չարժուիր մը ըրաւ ու աչքերը բացաւ։

Իսկոյն ճանչցաւ Ռընօտիէռն ու ոտքի ելաւ։

Երկիւղ մը կար նայուածքին մէջ զոր ուղղեց անոր վրայ, հիւանդ անասնոյ մը իւր տիրոջ վրայ ուղղած ակնարկին նման։

—Դո՞ն ես։

—Քիչ մը հանդարտեցա՞ր։

—Ի՞նչ կ'ուզես ինձմէ։

—Կրնա՞ս պատասխանել իմ հարցմանցս։

—Ինծի ի՞նչ հարցունելիք ունիս։

—Պ. Նօէլ տը Վիլլատօնին խոստովանո՞ր ես։

—Այո՛։

—Իր ազախինը լսեր է խոստովանութիւնդ։

—Ա՛հ, գոչեց ջաղացպանուհին, խեղդուկ հառաչանքով մը... բայց ես ամէն բան ըսի երէցին, ամե՛ն բան, կը հասկնա՞ս։

—Ազախինը եկաւ գտաւ զիս։

—Ի՞նչ ըսաւ։

—Կը պահանջէ որ ամուսինդ փրկենք իրեն սպառնացող դատապարտութենէն։

—Այդ բանին համար ի՞նչ ընելու է։

—Ինքզինքիս մատնելու ենք։

—Բայլ մը առաւ դէպ ի պառաւը որ կը քնանար։

—Ճշմարիտ է, և խօսքը մէջերնիս, արդարութիւն կ'ըլլայ։

—Բայց ես չեմ ուզեր, չեմ ուզեր։

—Ինչպէ՞ս պիտի ազատիս մեզ սպառնացող վտանգէն։

—Չեմ գիտեր։ Դու մտածէ, Վիրժինի Լաթուշն ապաննողը դու էիր։ Դու պէտք է որ ազատես զիս, եթէ կուզես որ ես զքեզ ազատեմ։ Իմ միաքս չէր անցած թէ կրնայինք այնպիսի սպանութիւն մը գործել։

—Մենք այլ ևս կորսուած ենք։

—Կորսուա՞ծ։

—Այո՛։ Հիմայ, տես ի՞նչ պիտի ընես։

Լա Հէյոն Ռընօտիէռի երեսը նայեցաւ սոսկմամբ։ Զայնը քաղցր և խիստ էր միանգամայն։ Բժշկին այդ կերպ խօսիլը լսած չէր երբէք։ Աչքերը քօղարկուած էին, այնպէս ինչպէս երբ մէկն ինքն իր վրայ կը մտածէ, երազայնոր, առանց արտաքին առարկայներու վրայ ուշադրութիւն դարձնելու։

—Ա՛լ թոյլ տալու չես որ ամուսնոյդ վրայ ծանրանայ Վիրժինի Լաթուշն սպանած ըլլալու ամբաստանութիւնը։

—Իրիկս չպիտի դատապարտուի։ Ինծի ըսին թէ Պ. Անտրէ Վիլլատօն պիտի պաշտպանէ զայն։

—Պ. Վիլլատօն շատ ճարտար է, քանի որ յաջողեցաւ իմ ոձիքս ազատել։ Սակայն ամուսնոյդ

կազմած գլխաւոր փողոցներէն անցան, իրենց դրօշներուն վրայ նշանակելով «Ութ ժամ աշխատութիւն»։ Աւելի քան 50 արհեստական միութիւնք մասնակցեցան ամբոխին, առաջնորդութեամբ հիւններու, որմնադիրներու և շինութիւնց մէջ աշխատող ուրիշ բանւորներու։ Հիւանները բանթող ըրած էին, բայց իրաւարարութեան մը հասաձայն, այս երկուշաբթի գործի պիտի վերսկսին։

—Ի Ֆանատա, կը հեռագրուի Օթաւայէ թէ շինութիւնք դադրած են քաղաքին ամէն կողմերն, որովհետեւ գործատէրք մերժած են բանւորներուն խնդիրքն, որք 9 ժամ աշխատիլ և 10 ժամու վարձք ընդունիլ կը խնդրեն։

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍՐ ԵՒ ՊԻԶՄԱՐՔ

Վիլհելմ Կայսր Սթրազպուրկի բերդէն այցելուն առթիւ, «Պիզմարք» անուանեալ բերդին մէջէն հեռագիր մը ղրկեց առ Պիզմարք Իշխան, իւր սիրալիր ողջոյնն հաղորդելով նախորդ Վարչապետին։

ՖՐԱՆՍԱՑԻՔ Ի ՏՈՀՈՄԷ

Տահոմէցիք ենն քիլոմէթր միսն հեռի են Փորթօ-Նովոյի ֆրանսական ամուր դիրքէն, և արմատներնին կորելու կը զրաղին։ Այսպէս քանի մը տարուց համար բոլորովին կը փճանայ արմատի հունձքն, և վաճառականութիւնը մեծ հարուած կը կրէ Տահոմէի եղերաց վրայ։ Ֆրանսացիք Տահոմէի թագաւորէն պատասխանի կը սպասեն իրենց վերջնագրին որով դերեաց փոխանակութիւն պահանջած էին, և միւս կողմէ զինուորական պատրաստութիւններն յառաջ կը տանին։

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թէհրանի ռուս դեսպան Պ. Պիւցով իւր պաշտօնավայրն հասնելուն պէս իրեն առաջին գործ պիտի ընէ Ռուսիոյ և Պարսկաստանի միջեւ առևտրական նոր դաշնագրոյ մը կնքման համար բանակցութիւններ բանալ։

ԱՆԳԼԻԱ

Գործաւորական խնդրոյ վրայ երեսփոխանական ժողովոյ մէջ հարցման մը պատասխանելով, Պ. Սմիթ ի դիմաց կառավարութեան յայտարարեց թէ նախարարութիւնն այս պահուս կը քննէ Գեղջնի Դեսպանախորհրդոյն որոշումներն, որոց համեմատ օրինագիծ մը պիտի առաջարկէ Խորհրդարանին, բայց այժմէն չի կրնար օրինագծին տրամադրութիւնները ճշդել։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈԲՈԼԻԻ ԻՇԽԱՆՆ. ՑԼԷՄԻԱԾՈՒՆ

Կ. Պոլսոյ Հեռագրական Գործակալութիւնը վերջին ժամուն հետեւեալ հեռագիրը կը հաղորդէ մեզ։

Բեգրասպուրկ, 6 մայիս

Իտալիոյ Գահաժառանգ Իշխանը, կեդրոնական Ասիայէն ի Բեգրասպուրկ վերադարձին առթիւ, Էջմիածին հանդիպեցաւ։ Այցելեց Հայոց Վանքն, ուր յանուն Հայրապետին՝ ընդունուեցաւ արքեպիսկոպոսին կողմէ։ Աչքէ անցուց հնութիւններն և Հայրապետին հետ ընթրեց։ Յետոյ ճամբան շարունակեց երեւանի վրայէն, ուր ընդունուեցաւ տեղական իշխանութեանց կողմէ։

Յառաջիկայ կիրակի, երեւման խաչի տօնին առթիւ, Ամէն։ Ս. Գաբրիէլ Հայրն հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէ Գարեգին Եպիսկոպոսի եկեղեցւոյն մէջ։

Զատկի առթիւ, Ռուսիոյ Վեհ. Կայսրը Ս. Սբ-ի-ը պատուանշանին առաջին աստիճանը (ժապաւէն) շնորհեր է Ս. Էջմիածնայ Սինոդին անդամ Գեր. Խուդաֆերդեանց և Գալուստեանց եպիսկոպոսներուն, ինչպէս և Թիֆլիզի նահանգին պետական կալուածոց կառավարիչ Պ. Յովհաննէս Խատիսեանի։

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանն, իւր բարձր հրամանման մէկ նոր հաւատիքը տուած է առ Վեհ. Տր. Տիգրան փաշա Փէշտիմալճեան, երկրորդ կարգի Մէճիտիէի պատուանշանաւ վարձատրելով Ն. Վեհութեան մատուցած կարեւոր ծառայութիւնները բժշկական ճիւղին մէջ։

ԴՊՐ. ՏԻԳՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մայիս 1 երեքշաբթի օրն՝ Ընկերութիւնս իւր տասն և մէկերորդ տարեդարձը պիտի տօնէ ի Գուլ-գարա, Ս. Բարութեան եկեղեցւոյ պարտէզը առաւօտեան ժամը 2½ին, որով Ընկերութեանս անդամներուն և աշակերտուհեաց ծնողք կը հրաւիրուին իրենց ներկայութեամբ պատուել սոյն հանդէսն։

Ի Դիմաց Դպր. Տիգնանց ընկերութեան
Տնօրէն Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Թ. Ղ. ՊԱԼԹԱՋԱՐԵԱՆ Զ. Ս. ՖՐԵՆՏԻԼԼԱՆ

ՄԱՀ

ԱԶՆ. ԳՐԻԳՈՐ ԷՖԷՆՏԻ ՆԵՐՍԷՍԵԱՆԻ

Խորին ցաւօք կը ծանուցանենք թէ Ազնուաշուք Գրիգոր Էֆէնտի Ներսէսեան յետ սակաւօրեայ հիւանդութեան իւր մահկանացուն կնքած է այս գիշեր իւր տան մէջ, ի Եէնի գիւղ։ Հանգուցեալն արքունական շինութեանց մէջ իւր ունեցած կարեւոր աշխատութեամբք և ազգային երեսփոխական, վարչական և այլ զանազան պաշտօններովն հանրածանօթ դէմքն էր հայ ընկերութեան բարձրագոյն դասուն մէջ։

Բնիկ Բարերդցի և յոյժ խանարհ ընտանիքէ մը սերեալ, Գրիգոր Էֆ. Ներսէսեան կենդանի օրինակ մն էր ինքնօգնութեան, անվհատ աշխատասիրութեան եւ հեռատես խնայողութեան, որոյմով, տարիներու ընթացքին մէջ, յաջողած էր հանիլ ընկերական սանդուխին բարձրագոյն աստիճանները։

Խնամոտ հայր զաւակաց՝ Ազնուաշուք հանգուցեալը ընտիր դաստիարակութիւն մը տուած էր իր զաւակաց, որք բազմանդամ նահապետական դերդաստան մը կազմած էին իրենց պատկառելի պետին շուրջը։

Ի մէջ զանազան բարեբարութեանց, Իճատիէի ազգային վարժարանն հիմնուած է Ջանիւք և նպաստիւք հանգուցելոյն, որուն անուան նուիրուած է։ Նոյնպէս, ամէն առթիւ, ստորած է ազգային ամէն բարեգործակ գործոց և հաստատութեանց։

Իւր երիք մանչ զաւակներու մահէն յետոյ, անոնց անդրանկին՝ ողբացեալ Ներսէս էֆ. Ներսէսեանի վարդահաս գառնագէտ մահը խորապէս ցնցած էր իւր հայրական սիրտը և զինքն այնքան ընկճած որ Գրիգոր էֆէնտի չէ կրցած դիմակայել վարանցիկ հիւանդութեան մը յանկարծադէպ հարուածին։

* * *

Բուդարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի վաղը, հինգշաբթի առաւօտ, ժամ երեք ու կէսին, ի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Բերայի։

ԵՒՐՈՊԱՅԻ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՈՒԱՆԵՆԱՅԻՆ

Առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ արքունի փողերանոցին փոքրագրիչներու պետ Ռաֆէլ Ֆէլիթեան էֆէնտիի։

Առաջին կարգի Օսմանիէ՝ կայսերական իրատէներու Լիվա Մէէմէտ փաշայի։

Երկրորդ կարգի Օսմանիէ՝ Արտաքին գործոց Նախարարութեան հիւպատոսական գործոց դիւանի տնօրէն Շէմսէտտին պէյի։

Երկրորդ կարգի Մէճիտիէ՝ կայսերական պալատական բժիշկներէն Փէչտիմալճեան Տր. Տիգրան փաշայի, վաճառական Նէմլիզատէ Հաճի Մահմուտ էֆէնտիի և կայսերական բժշկական վարժարանի ուսուցիչներէն գնդապետ Ֆէյզուլլահ պէյի։

Երրորդ կարգի Օսմանիէ՝ կայսերական բժիշկներէն հաղարապետ Ճէմիլ պէյի։

Չորրորդ կարգի Օսմանիէ՝ Ակիւտարի կառավարչութեան կեդրոնական ոստիկան Վէհպի էֆէնտիի։

Չորրորդ կարգի Մէճիտիէ՝ Ակիւտարի ոստիկանաց ժողովոյ Նախագահ Մուսթաֆա էֆէնտիի և անդամներէն ոստիկան Հիւսէյին պէյի։

Հինգերորդ կարգի Մէճիտիէ՝ նոյն ժողովոյ անդամներէն ոստիկան Ֆախրի ու Մուսթաֆա էֆէնտիներու։

ՏԷՐՈՒԹԵԱՆ ԵԼՄՏԱՑՈՅՑԸ

Կայսերական իրատէ մը վերացուցած է այն որոշումներն, զորս եղմտացոյցի հաստատակամութեան համար Բարձր. Մեծ-Եպարքոսին նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովը տուած էին և զորս ընդունած էր նախաբաց Խորհուրդն։

Այս որոշմանց համաձայն ոստիճանարար պիտի ջնջուին անպէտ պաշտօնները, կարող անձեր պաշտօնի պիտի կոչուին, ներկայ ու յառաջիկայ տարիներու եղմտացոյցներէն դուրս ոչ է դրամ չպիտի ծախսուի առանց անհրաժեշտ պիտոյից, կառավարական իրաքանչիւր պաշտօնատուն խնայողութեամբ պիտի վարուի և իւր մասնակի եղմտացոյցը միշտ հաստատակամութեան մէջ պիտի պահէ։

Բարձր. Մեծ-Եպարքոսը կառավարական բոլոր պաշտօնատանց և կուսակալութեանց հաղորդած է կայսերական Իրատէն ի գործադրութիւն։

* * *

Եղմտական ժողովոյ անդամներէն Սիւլէյման Սուտի էֆէնտիի պաշտօն յանձնուած է կայս. հրամանաւ կազմել եղմտական երկու յանձնաժողովներու իրատատութեան վերաբերեալ կանոնադիր մը պատրաստել։

Սիւլէյման Սուտի էֆէնտի երէկ Եղմտական Նախարար Վեհմ. Բակոբ փաշայի ներկայացաւ և այս առթիւ խորհրդակցութիւնք կատարուեցան։

Ի ԿԱՌՍՍ. ՊԱԼԱՏ

Բարձր. Մեծ-Եպարքոսն երէկ առաւօտ կայս. պալատ գնաց եւ Վեհ. Սուլթանի ինչ ինչ հրամաններն ընտանեկ յետոյ Բ. Դուռը դարձաւ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

Թուրքիոյ եւ Իտալիոյ միջեւ վերանորոգելի առեւտրական դաշնագրոյն համար կազմեալ յանձնաժողովն երէկ ի Նիսա գումարեցաւ ընդ նախագահութեամբ Արտաքին գործոց Նախարարութեան խորհրդական Վեհմ. Բարութիւն փաշայի եւ խորհրդակցութիւններ կատարեց։ Յանձնաժողովը կը կազմեն անտառաց և հանքաց ընդհանուր տնօրէն Գալուժեան Պետրոս էֆէնտի, իտալական դեսպանատան առաջին քարտուղար Պ. Թուճինի և առաջին թարգման Պ. Անթոնիո։

ԻԲ. ԴՈՒՌՆ

Ներքին գործոց Նախարար Վեհմ. Միւնիր փաշա և Էվգաֆի Նախարար Վեհմ. Բիզա փաշա երէկ Բ. Դուռը գնացին և յաջորդաբար խորհրդակցութիւններ կատարեցին Բարձ. Մեծ-Եպարքոսին հետ։

—Աւստրիական դեսպան Պառոն տը Քալիչէ և իտալական դեսպան Պառոն Պլան երէկ Բ. Դուռն երթալով, յաջորդաբար տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին և Արտաքին գործոց Վեհմ. Նախարարին հետ։

—Պելճիական դեսպան Պ. տը Որչկրաֆ, ընկերակցութեամբ դեսպանատան նոր խորհրդական Պառոն Կիլեօմի երէկ Բ. Դուռը գնաց և Արտաքին գործոց Վեհմ. Նախարարին Ներկայացուց դեսպանատան նոր խորհրդականը։

—Մեծ-Եպարքոսին Խորհրդական Շէֆգաթլի էֆէնտի, որ ժամանակէ մը հետէ հիւանդ էր, ապաքինած ըլլալով, իւր պաշտօնի գլուխն անցած է։

—Արտաքին գործոց Նախարարութեան թարգման Կիւլլապեան Միքայէլ էֆէնտի եւս ապաքինած ըլլալով, իւր պաշտօնի գլուխն անցած է։ Կիւլլապեան էֆէնտի երկուշաբթի օրը Լոյտի շոգենաւն երթալով, ի դիմաց Վեհմ. Սայիտ փաշայի ողջերթ մատթեց հելլենական դեսպանին։

ԿԱՌՍՍ. ՀՈԴՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Վեհ. Սուլթանն հրամայած է յաստէ առ մարմարի մը մէջ նշանակել՝ Խրզգամի Շէրիֆի հանդէսին առթիւ Թոփդաբուի պալատը դնացած պահուն իւր ճամբուն վրայ կեցող իսրամ և ոչխարամ վարժարաններու աշակերտաց և ուսուցչաց թիւն ու վարժարանաց անունները։

Կայս. պալատն առաջին քարտուղարութիւնը կայս. սոյն Իրատէն հաղորդած է Քաղաքապետութեան, որ հարկ եղած տումարը պատրաստելով, երէկ դիշեր մատուցած է զայն Վեհ. Սուլթանին։

ՊԱԼԻԱՒ (ԴԱՐԱՍԻ) ՀԱՆԲԵՐԸ

Վերջերս ծանուցուեցաւ թէ Օսմ. կայս. Պանքային ընդհ. տնօրէն Սրբ Լոկար Վիլնոբնդի օժանդակութեամբ պիտի ձեռնարկի Դարասիի Պալիա անուն տեղը գտնուած բարակի հանքաց շահագործման։ Բան նորագոյն տեղեկութեանց, համաձայնութիւն մը գոյանալու վրայ է Սրբ Լու. Վիլնոբնդի կողմէ առաջարկուած և Պ. Ակոթայի ու Լավրիոմի ընկերութեան կողմէ ընդունուած հիմանց վրայ։ Այս վերջինք գործին մէջ շահակից են անոր համար որ յիշեալ հանքաց նախկին արտօնատէր Պ. Բէյզերի կողմէ թողուած իրաւանց մէկ մասն իրենց կը պատկանի։ Լավրիոմի ընկերութիւն Ամէնք քաղաքին վերաբերեալ կարեւոր ձեռնարկութիւններով զբաղած ըլլալով, իւր այդ իրաւունքները նորակազմ խմբին պիտի թողու։ Սբը Լ. Վիլնոբնդի նախաձեռնութիւնն, — որով Օսմ. կայս. Պանքան մասնակից կ'ըլլայ գործին, — մեծ վստահութիւն ներշնչած է անգլիացի գրամատարաց։ Սբը Լ. Վիլնոբնդի միջնորդութեամբ, Լավրիոմի ընկերութիւնն իւր իրաւանց փոխարէն հաստատում մը պիտի ստանայ, անգլիացի գրամատարաց խումբը պիտի կազմուի և երկիրը պիտի օգտուի այս նոր ձեռնարկին առաւելութիւններէն։ Վերջնական համաձայնութեան մասին Պ. Ակոթայի կողմէ արուած ապահովութեան վրայ, Սբը Լակ. Վիլնոբնդի կազմած խումբը Ֆրէշֆիլտ անուն երկրագործական ընկերութիւնը հանքերը զրկած է ուսումնասիրութիւններ կատարելու համար։

ԷՖԷՆԴԻ ՓԱՇԱ

Ընդհանուր Սպայակոյտի դեր-նախագահ Ֆէրիզ Լութֆի փաշա, որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, բոլորովին ապաքինած ըլլալով, ուրբաթ օրը կայս. պալատ գնաց և իւր հիւանդութեան միջոցին Վեհ. Սուլթանին կողմէ ցոյց տրուած հոգածութեանց համար շնորհակալութիւն և երախտագիտութիւն յայտնեց։ Իսմէթ փաշա այս առթիւ եւս արժանացաւ Ն. Վեհափառութեան մեծարանաց։

Ֆէրիզ Շաքիր փաշա, որ Իսմէթ փաշայի հիւանդութեան պահուն կայս. հրամանաւ նորա պաշտօնը կը վարէր փոխանորդաբար, Գերմանիա պիտի ուղեւորի նախապէս իրեն յանձնուած պաշտօնը կատարելու համար։

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Ազգքսանդրիայէն կը գրեն թէ Բարձր. Նուպար փաշա որ Ամերն Եգիպտոս անցուցած էր, նախորդ շաբթուն Ֆրանսա ուղեւորեր է։

Պ. ԺՕՐԺ ԲԷՌՈ

Ֆրանսայի Գիտութեանց Կաճառին անդամ և Բարիզի Լեզու նորոյ բարձրագոյն վարժարանի տնօրէն Պ. Ժորժ Բէռռօ մայրաքաղաքս հասաւ Ամէնքէն։ Ֆրանսացի գիտնականը երկու ամիս մնացած է Կոնստանդնի մայրաքաղաքին մէջ, հնագիտական կարեւոր երկասիրութեան մը պատրաստութեան համար։ Պ. Բէռռօ՝ Բարիզ դառնալէ առաջ, Կ. Պոլիս եկած է տեսնելու համար այն հին դամբարանները զորս կայս. թանգարանի տնօրէն Համիտ պէյ երկու տարի առաջ դտաւ ի Սայտա։ Այս երկրորդ անգամն է որ Պ. Բէռռօ Կ. Պոլիս կուգայ։ առաջին անգամ, 1861ին, յատուկ պաշտօնով Փոքր-Ասիա ղրկուելով, մայրաքաղաքս այցելելու առթիւ ունեցաւ։ Այդ ուղեւորութեան առթիւ, Պ. Ժօռժ Բէռռօ գիտական կարեւոր աշխատասիրութիւն մը հրատարակած է։

ԱԼՊԱՆԻԱ

Ռումանիոյ ճամբով առնուած հեռագիրք կը ծանուցանեն թէ պալկար խռովարարք ոմանք Ալպանիոյ կողմերը շրջելով կ'աշխատին ժողովուրդը պաղեցնել յոյն, ալբան և կաթոլիկութենէ եւ կը դրդռեն ժողովուրդն որ ազգանացի երիտասարդք Սոֆիա ղրկուին իրենց ուսումը կատարելու գործելու համար։ Զոհուոյ, այս լուրը տալէ յետոյ, կ'ըսէ թէ կարելի չէ որ Ալպանիոյ մէջ այդ կարգի անձինք գտնուին ունենան զի կառավարական պաշտօնեայք արիւն են և պարտաճանաչ։

ՍԿԻՒՏԱՐԻ ԶՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Սկիւտար և Գալատայի զի Ջրի ընկերութիւնն ի մօտոյ հարկ եղած շինութեանց պիտի ձեռնարկէ Սկիւտարէն մինչեւ Էրենքէոյ ջուր բաշխելու համար։ Հարիւր յիսուն չափ անձինք փափաք յայտնած են արդէն ջուր առնլու և ընկերութիւնը կ'արձանագրէ անոնց անունները։ Ընկերութիւնը իւր կատարելի շինութեանց նկատմամբ ի մօտոյ ծրագիր մը պիտի մատուցանէ Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան։

ՇԵՐԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ Ի ՊՐՈՒՍԱ

Պրուսայէն Լ. թիւրքի ուղղեալ նամակ մը գովեստիւք կը խօսի Պրուսայի շերամագործական վարժարանին վրայ, որ երկու տարիէ հետէ հաստատեալ, կարեւոր ծառայութիւններ մատուցած է արդէն, և նահանգին մէջ շերամագործութեան տարագայ ծաւալման վրայ մեծ յոյսեր կուտայ։ Շերամագործութիւնն որ տառնօք այսքան բարգաւաճ վիճակ մը ունէր անդ, տակաւ առ տակաւ թնկած էր, լաւ տեսակէ հունտերը կը պակսէին, ոչ միայն տեղական, այլ եւ օտար արտադրութեանց հունտերը։ Շերամագործներն քիչերը կրնային լաւը յոռի տեսակէն զանազանել։ Իրաց այս վիճակը դարմանելու համար է որ երկրագործական վարժարան հաստատուեցաւ ի Պրուսա, Եւրոպոյ նմանօրինակ հաստատութեան ձեւով։

Եղմտական Նախարար Վեհմ. Յակոբ փաշայի և Օսմ. Հանրային Պարտուց վարչութեան ներկայացուցիչ Պ. Վիլնոբնդ Գալատայի մէջեւ գոյացած համաձայնութեան մը վրայ, շերամագործական վարժարանն հաստատուեցաւ ի Պրուսա։ Այդ վարժարանին տնօրինութիւնն յանձնուած է Մոնբէլիէի երկրագործական վարժարանին յառաջադէմ աշակերտներէն Թորգոմեան էֆէնտի։ Նախորդ տարին տասն երկու վկայեալ աշակերտք ելան, այս տարի ալ քսան աշակերտք պիտի ելնեն։

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ Ի ԹՈՒՐՔԻԱ

Տօքթ. Հիւսէյին Խալգի պէյ, որ Բարիզու արուեստանոցներն պահուն անդ ղրկուած էր, մասնակցելու համար ախրոգիտեան ախտերու և բժշկական հանրային նպաստամատոյց համաժողովին, առաջարկած է համաժողովոյն որ կ. Պոլսոյ և Թուրքիոյ այլ և այլ գիւղաքաղաքաց մէջ գտնուած օտար հիւանդանոցք օսմ. կայսրութեան հովանոյն ներքեւ խառն վարչութեան մը կողմէ մատակարարուին, որովհետեւ այդ հիւանդանոցներու զատ զատ վարչութեանց ներքեւ գտնուելէն եւ կրօնի ու ազգութեան մրցումներ առաջ գալէն այլեւ այլ զեղծումներ կը գործուին։

Համաժողովն սկզբամբ ընդունելով այդ առաջարկն, որոշեր է ուրիշ համաժողով մը գումարել այդ խնդրոյն վրայ խորհրդակցելու եւ գործադրութեան եղանակն որոշելու համար։

Ֆէրիզ Քեազիմ փաշա, որ մէկ քանի օրէ ի վեր հիւանդ էր, մեռեր է իւր ապարանքին մէջ ի Սկիւտար։ Քեազիմ փաշա հանրածանօթ էր իրրեւ բանաստեղծ։

—Գատրգիւղի թագաւորութեան պաշտօնեայք ի Սէօյիւտի Զէյմի մասնաճիւղ մը խանութին մէջ հոսած մեր գանելով, ծովը նետեցին և մասնաճիւղն ալ օրինաց արամագրութեան ենթարկուեցաւ։

—Շոգենաւուց յատակը մաքրելու համար Հէյպէլի կղզւոյն մէջ առաջանները և գործաւորներու չինութեան պիտի ձեռնարկուի, որուն համար անգլիացի խումբ մը դրամագլուխ մը ստորագրած է, Թէյշլի Կ. Պոլսոյ թղթակից Պ. Կուրաշչենց մասնակից է գործին և տեղական դժուարութիւններն հարթել կ'աշխատի։

—Աւստրիական Լոյտի ընկերութեան առաջին քարտուղար Պ. Անֆիա, որ Ֆրանսական գերմանական պատերազմին ժամանակ Թ-ոյշլի թղթակիցն էր, մայրաքաղաքս եկած է։

—Ամերիկան դեսպանատան քարտուղար Պ. Բէյզիթքն Փինկ երէկ Պրուսայի Ջերմուկներն ուղեւորեցաւ։

—Ֆոն տէր Կոյց փաշա և մէկ քանի օտարազգի զրօսաշրջիկներ երէկ Պրուսա ուղեւորեցան։

—Եղմտական Նախարարութիւնն հրահանգ ուղղեց ամէն կողմ թէ գիւղերու և թաղերու մանթարք պէտք է թէմերի տուրքէ ազատ մնան և այն ատեն միայն վճարեն այդ տուրքն, երբ մանթարութենէ զատ ուրիշ ոեւէ արհեստով կամ առեւտրով կ'զբաղին։

—Շերբ թի չոգենաւ մը երէկ Պէշիքթաշի առջեւ նաւակ մը ընկղմեց։ Նաւավարն թէեւ ծանր ինկաւ, սակայն ուրիշ նաւավարք ազատեցին զնա։

—Հինգալի կողմերն առատ անձրեւներ տեղացած են և մինչեւ իսկ մէկ քանի տաներ եւս վնասուեր են գոյացեալ հեղեղներէն։

—Զեռնէաս իշխանութեան որոշմամբ ջրհանիր զրոյց հարը բաղնիներէն Հիւսկյին էֆէնտի Ադրիանուպոլիս պիտի ուղեւորի ջրհանկրութեան վերաբերեալ գործադրութիւններն ուսուցանելու համար տեղւոյն ջրհանկրաց։ Ադրիանուպոլսոյ մէջ սակայն ծագած հրդեհներ և ջրհաններու անբաւականութիւնը տեղի տուած են այս որոշման։

—Երէկ Իրիկուն մայրաքաղաքս ժամանեցին երեսունի չափ Ֆրանսացի երկրաչափներ։

—Նախընթաց օր ի Հայտար Փաշա կատղած շուն մը Մինչ ո անուն բեռնակիր մը խածաւ։ Բեռնակիրն երէկ մեռաւ։ Կատղած շունն եւս սպանուեցաւ։

—Ոստիկանութեան պաշտօնեայք երէկ Շէրիֆ անուն պարսիկ մը ձերբակալեցին, երբ կեղծ մէջիտիյէ մը քշելու կը ջանար։

ՏՈՒԲՈ. ՊԵՏՐՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

Կը դարմանէ ամէն տեսակ և մասնաւորապէս արտաքին և ծնողական գործարանաց հիւանդութիւնները, զորս իրեն մասնագիտութիւն ըրած է անոնց նկատմամբ կատարած փորձերովն ու յաջողութեամբ։

Հաստատուած է Պահչէ-Գարու թիւ 18 Ա. Մերճամէճեան գեղարանը, ուր ամէն օր ժամ 2—4 կ'ընդունի իրեն դիմող հիւանդները։ Ազքատները ձրի կը դարմանուին։ 464 3—3

ԽՕՄԱՆԱԿ ԵՒ ՍՈՒՊԱԿ

Որք կը հրատարակուին երբեմն իրեւ կրօնական թերթ, այժմ զատ զատ կազմուած լինելով կը գտնուին բոլոր դրամատաց և ջրամատաց քով։ Դիմ իւրաքանչիւրին հինգ դրուշ։ Պէտք ունեցողք կրնան և դիմել առ Տիմոթէոս էֆ. Պալըզճեան, կազմողաբար ի Սուլթան Համամ, թիւ 14, իսկ անվճար թերթերուն գինը ղրկել առ Վահան Վ. Պարտիկեան։ 2—7

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՊԵՐԼԻՆ, 6 Մայիս. — Վիլհելմ Կայսր բացաւ նորընտիր Ռայխսթակին նստաշրջանն։ Իւր գահճառով ըսաւ. «Պատգամեան տեսական պահպանումն իմ ջանիցս մշտական նպատակն է։ Համոզուած եմ թէ օտար կառավարութիւնք կատարելապէս ապահովուած են իմ աշխարհակալութեանս նկատմամբ։ Իմ օգնութիւնս նիզակակցացս հետ ժողովուրդք կը ճանչնան խաղաղասէր հանգամանքն արդի նիզակակցութեանց, որք մեր պաշտպանութեան համար կնքուած են, և զորս մշակել և օտար Տէրութեանց հետ մեր բարեկամական յարաբերութիւնները բարւոք դիմակի մէջ պահել մեր կէս նպատակն է։ Արդի պայմանաց ո՛ և է խանգարում կը վտանգէ եւրոպեան հաստատակամութիւնն և խաղաղասէր աշխարհավարութիւնը։ Կայսրը կը ծանուցանէ այն կենսորական օրէնքներն և գործադրուող պաշտպանութեան վերաբերեալ օրէնքներն որք Ռայխսթակին պիտի մատուցուին։

—Ռայխսթակին խնդրուած գինուորական յաւելմանց համար տարեկան ծախքը 18 միլիոն մարքի աւելի չպիտի լինի։

—Ֆրանսական դեսպան Պ. Հերպերդ ընթրիք մը տուաւ ի պատիւ նախարարաց։ Ֆոն Թաֆրիվիի. Բոլոր նախարարք և դեսպանք ներկայ էին։

—Պելճիական պաշտօնական Օրագիրը կը հրատարակէ Հոլանդ ծովակալին անուանումն իբրեւ նախարար ծովային գործոց և անդամ Դաշնակցային Խորհրդոյ։

ԲԱՐԻԶ

Բարիզ, 6։—Կազմաններու գործաւորաց մասնակի բանթողմն առթիւ, տնօրէնութիւնը կը յայտարարէ թէ կազի բաշխումը կանոնաւորապէս պիտի շարունակուի։ Ոչ մէկ նոր անկարգութիւն պատահեցաւ ի Ռուպէ և ի Թուլուզուան։

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ Ց'ԻՏԱԼԻԱ

ՀՌՈՄ, 6։—Ներակոյսը բարեպաշտական հաստատութեանց վերաբերեալ օրէնքը քննելով, 77ի դէմ 93 քուէով մերժեց Պ. Քրիսպիի առաջարկն, որ յանձնաժողովոյ կողմէ ջնջուած մէկ յօդուածին վերահաստատութիւնը կը խնդրէր։ Առաջ ծաղեցաւ նախարարական տագնապ։

—Ուսմէրթօ թագաւոր և Մարկարիտա թագուհին ներկայ էին ազգային հրաշալանաձգութեան ընկերութեան փորձերուն։ Թագաւորն ինք հինգ անգամ հրացանաձգութեամբ փորձերուն սկզբնաւորութիւնն ըրաւ։ Խուռն բազմութիւն կար, որ եռանդագին ցոյցեր ըրաւ ի պատիւ նոցին Վեհափառութեանց։

ԱՐԵՒԵԼ. ՀԵՌԱԳՐ. ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԲԱՐԻԶ, 6 մայիս։— Բանամայի ջրանցին վերաբերեալ զանազան առաջարկութիւններն ուսումնասիրելու պաշտօն ունեցող յանձնախումբն աւարտեց իւր տեղեկագիրը։ Յանձնախումբը կ'ընդունի այդ ջրանցն ի գլուխ հանել սահմանքներու գրութեամբ։ Զեռնարկն ի գլուխ հանելու համար հարկ եղած գումարը կը հաշուի 900 միլիոն ֆրանք։ աշխատութիւնք պիտի տեւեն իրը ութ տարի։

—Այսօր ստորագրուեցաւ հրովարտակն որ ընդհանուր սպայակոյտի պետ կ'անուանէ Միրիպէլ զօրավարը։

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ալեքսանդրիայի շաբաթ աւուր թուին մէջ Հրդեհի յօդուածը կարդացի։ Հեղինակը իմ անունս ալ մէջ բերած է ընդդէմ Մանչեսդրի պատուական Հայ դաղթականութեան։

Եթէ սաւգիւ բոլոր ինչ որ իմ բերնէս ելած ցուցուած է այդ յօդուածին մէջ, չուենենար յաւելուած և չափազանց ինչ՝ կ'ընդունէի իրը արդար դատապարտութիւն։ Եկեղեցականաց հանդերձի վրայ այդ մէջբերում տեղի ունեցաւ ի Ներկայութեան Ազն. Տօքթոր Թիրեաքեան էֆէնտիի։ Կ'ընդունիմ սորա վկայութիւնն եւ արդարացութիւնը։

Մնամ ազօթարար
ԽՈՐԷՆ ՎԱՐԴ. Տ. ԿԻՒՐՈՒՇԵԱՆՑ
Կ. Պոլիս 24 ապրիլ 1890

ԳՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 25 Ապրիլ

Ասեղնագործ. Բանալիք.

Ստեղծ Երեսնոյ գոյ. (Մեծաց)	Ռ. Սերթ	20 27
Ոսկեայ Գոյանէն Վերջ	»	20 25
Սերոյ մէջ	»	— —
Աւստրիական գրաստեղծ	»	20 28
Կեռ տրին	»	20 27

ԽՈՍԻՆԳՈՒԼՔԸ ՏՈՆԻԼԻ

Ստեղծ Երեսնոյ		54 25
Ալբ տաւատ		55
Մեծ տր		55 4

ԸՆԹԱՑԻՔ ԱՐԵԼԵՔՈՒՆ

Ասիական	A. Սերթ	40 3/4
»	B. »	25 3/4
»	C. »	20 30

ՊԱՅԾԵՆՏՈՍԻՆ

Մասնաբաժին Անգլիոյ	Ոսկի	5 2
Երեսուն Մեծերոյ	Օսմ. »	9 82
Վանք տր Գեղեր	» »	7 22
Սեռ. Շանմ է Վարեր	» »	5
Թրամուէյ	» »	90
Բանկի Երկրագործի	Ոսկի	77 7/8
Ոսկեկոփան տր Բրիտանիոյ	»	— —
Բանձնաբաժնի Լաւերոմ. Գ. Կ.		127

ԸՆԹԱՑՔ ԳՐԱՄՈՅՈՑ

